

100 Հարց Ա.

### Հաղորդութեան Մասին

90) Ինչպէս կը բացատրեն իրենց տեսակէտը միևն եկեղեցիները, որոնք խմորեալ հաց կ'օգտագործեն:

Հացի տեսակի շուրջ յառաջացած կնճռոտ պատճառներէն հիմնականը նոր կտակարանի ժամանակգրութիւնն է, աւելի ճիշդ հետեւեալ հարցի պատասխանը, թէ ո՞ր օրը Յիսուս իր աշակերտներուն հետ ընթրիք ըրաւ եւ հաստատեց Ա. Հաղորդութեան խորհուրդը: Հստ համտես Աւետարաններուն Զատկական ընթրիքը տեղի ունեցած է Նիսան (Ապրիլ) ամսուայ 14-ի երեկոյեան Հինգշարթի օրը: Ուրբաթ կ'ըլլայ Զատկի առաջին օրը, իսկ Յովկաննէսի աւետարանի տեղեկութիւններու համաձայն Նիսանի 14-ը Ուրբաթ էր, այսինքն Զատկի շաբաթ օրն էր՝ Նիսան 15-ին: Ասոր կը հետեւի, որ Յիսուս վերջին ընթրիքը ըրած է Հինգշարթի երեկոյեան, Նիսան 13-ին, երբ կը սկսէր Նիսանի 14-ը՝ Ուրբաթ օրը: Աւետարաններուն Հաղորդած այս տեղեկութիւնները ցայսօր կը քննարկուին Ա. Գիրքի մեկնիչներու եւ ուսումնասիրողներու կողմէ, երկու տեսակէտներն ալ ունին իրենց պաշտպաններն ու ընդդիմախօսները: Հայոց եկեղեցին դարերէ ի վեր Ա. Պատարագի խորհուրդը կը կատարէ բաղարջ հացով եւ հիմնուելով համտես Աւետարաններուն վրայ պնդելով, որ Յիսուս առաքեալներուն հետ Նիսանի 14-ին, Հինգշարթի օրը, Զատկական ընթրիքը ըրաւ եւ օգտագործեց բաղարջ հաց:

### ԱՊԱՆԴԱԿԱՎԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

#### ԲԱՍՍԵԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՍ ՊԱՏՄԱԿԱՆԸ 2-Ա. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆԸ


Ա. Երրորդութեան համար կ'ըսեն, թէ չկայ Երրորդութիւն, որ իրեւ թէ հեթանոսական է, այլ՝ կայ միակ Աստւած մը՝ Եհովան, որուն Որդին (բայց Աստուած չէ) Յիսուս Քրիստոսն է: Երրորդութեան «անտրամաբանական» վարդապետութիւնը Սատանային կողմէ հնարուած է -կ'ըսեն- բնաւ չի յիշուիր Աստուածաշունչին մէջ:

Բայց ասիկա բնաւ ճիշդ չէ: Թէեւ «Երրորդութիւն» բառը չկայ Աստւածաշունչին մէջ, բայց անոր մասին վկայութիւնները բազմաթիւ են, եւ անհերքելի: Յիսուս ինք իր աշակերտներուն պատուիրեց. «Գացէ՛ք բոլոր ազգերը աշակերտեցէ՛ք, մկրտեցէ՛ք զանոնք յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ» (Մտթ. 28.19): Պողոս Առաքեալ Երրորդութեան երեք անձերուն մասին խօսելով՝ զանոնք «ՆՈՅՆ ԱՍՏՈՒԱԾԼ» կը կոչէ (Ա. Կոր 12.3-6), իսկ Բ. Կոր 13.13-ին մէջ, նոյն երեք անձերուն անունով կ'օրէնէ իր հաւատացեալները:

Աստուածաշունչը յաճախ միասին կը յիշէ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին (տե՛ս Մտթ. 3.16-17; Հոռոմ 8.9: Եփես. 4.4-6; Ա. Պետ. 1.2: Յուղա 20.21: Ա. Յովկ. 2.22-23), եւ ցոյց կուտայ, թէ անոնք երեքն ալ նոյն ընութիւնը եւ նոյն յատկանիշները ունին, երեքն ալ յաւիտենական են եւ անվախճան:

Սիրելի ընթերցող, ԾՐԱԳ քերքը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկալին մօս: Նաեւ՝ Facebook-ի վրայ փետուել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՑԵՏ.



ԲՈՒ ԽՈՍՔ ԻՄ ՈՅԵՐՈՒՄ ՑՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԻՆԵՐՈՒՄ ԼՈՅ  
(Ա. 119.105)

ԺԱՐԱԿԻ

Կիրակի, 14 ՅՈՒՆՈՒԱՐ 2018

ԹԻՒ 2

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ  
ԵԱ. 54.1-14 Ա. ՏԱ. 1.1-11  
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒՏԱՐԱՆԸ ԸՆՎՐԱՆՆՈՒ 2.1-11

Յիսուսի Գալիլիա հասնելուն երրորդ օրը հարսանիք մը կար Կանա քաղաքին մէջ, եւ Յիսուսի մայրը հոն էր: Յիսուս եւ իր աշակերտներն ալ հրամրուած էին հարսանիքին: Երբ զինին պակսեցաւ, Յիսուսի մայրը իրեն ըսաւ.- «Գինի չունին»:

«Մա՞յր, մեզի ի՞նչ», - պատասխանեց Յիսուս, - «իմ ժամանակս տակալին չէ հասած»:

Սակայն իր մայրը ըսաւ սպասաւորներուն. «Ինչ որ լսէ ձեզի՝ կատարեցէ՛ք»: Հրեաներու ծիսական մաքրութեան սովորութեան համաձայն, հոն քարէ վեց կարասներ կային, որոնցմէ իրաքանչիւրը ութառնելն հարիւր լիթր կ'առնէր: Յիսուս ըսաւ սպասաւորներուն.- «Կարասները ջուրով լեցուցէ՛ք»:

Եւ սպասաւորները լեցուին մինչեւ քերան: Յետոյ ըսաւ անոնց. «Հիմա առէք եւ սեղանապետին տարէ՛ք»:


Անոնք ալ տարին: Սեղանապետը համտեսց զինիի փոխուած ջուրը, բայց չգիտցաւ, թէ ուրկէ էր. թէեւ սպասաւորները, որոնք ջուրը լեցուցած էին զիտէին: Այն ատեն սեղանապետը փեսային ըսաւ. «Ամէն մարդ նախ զինին կը հրամցնէ, իսկ երբ զինովնան՝ այն ատեն հասարակը, մինչ դուն ընտիր զինին պահեր ես մինչեւ հիմա»:

Յիսուս իր այս առաջին հրաշքը կատարեց Գալիլիայի Կանա քաղաքին մէջ: Հոն ան իր փառքը յայտնեց եւ աշակերտները հաւատացին իրեն:

#### ԱՌԱԿ 5

Թոյլ մի՛ տար, որ օտարներ յագենան քու օգորութեամբդ, եւ վաստակդ մտնէ ուրիշներուն տունը, որպէսզի օր մը երբ մարմնիդ անդամները տկարանան, զղաս եւ ըսես. «ինչո՞ւ ես զիս հեռու պահեցի քու խրատէդ եւ անտեսեցի յանդիմանութիւններդ, չսեցի զիս խրատողին թելադրութիւնները եւ չունկնդրեցի ուսուցիչս խօսքը. թիշ մնացած էր, որ հաւատացեալներու համախմբումին եւ ժողովուրդին մէջ ամէն տեսակ չարիքներու նշանակ դառնայի»:

**ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
Ս. ԾՆՈՒՆԴ**



Յովհաննես Կարապետը՝ Յիսուս Քրիստոսի գալուստը վկայած մարդաբարեկեն վերջինն է, որ հետագային նաև մկրտեց զԱյօմ՝ այնուհետեւ կոչելով «Յովհաննես Մկրտիչ»։ Ան մեծ համբաւ ուներ իր ապաշխարհութեամբ, քարոզչութեամբ եւ իրեն հետեւրդներու մկրտութեամբ։ Իր հանդեպ յարգանքը այնքան մեծ եղած է, որ իր հետեւրդները հարց կու տային, թէ արդեօֆ ի՞նքն էր Քրիստոսը։

Հայաստանեայց առաքելական եկեղեցին Յովհաննես Կարապետի յիշատակը կը նշէ չորս առիթներով, որոնցմէ երկուրն են՝ ծնունդը եւ գլխատումը։

Սրբոյն Յովհաննու Կարապետի ծննդեան տօնը կը գուգադիպի Երկուշաբթի՝ 15 Յունուար, 2018-ին։

Այս առիթով հանդիսաւոր Պատարագ պիտի մատուցուի Յովհաննու Կարապետ Եկեղեցւոյ մեջ Կիրակի 14 Յունուարին։

Կը շնորհաւորենք բոլոր Յովհաննես եւ Կարապետ անունը կրող մեր եկեղեցւոյ գաւակներուն անուանակոչութեան տօնը մարդելով բոլորին արեւշատութիւն։

**ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ**

**Ի՞ՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ  
ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՔԱՌԱՄՆՈՐԵԱՅ  
ԸՆԾԱՅՈՒՄԸ**

Ի հետեւումն Հին Կտակարանի, մանուկը ծնելէն ետք, մայրը զինք 40-րդ օրը տաճար կը տանի ծննդեան անմաքրութենէն սրբուելու եւ մանուկը Աստուծոյ լթայելու համար (տե՛ս Ղետ. 12.6-8)։ Այս օրէնքին սահմանադիրը Աստուած ի՞նքն է Հին Ուխտի Եկեղեցին մէջ, որ Քրիստոսի վրայ ալ կատարուեցաւ։ Այդ պատճառաւ, Նոր Ուխտի Եկեղեցին ալ տնօրինեց այդ մէկը կատարել, ո՛չ միայն անդրանիկներու պարագային, այլ՝ բոլոր նորածիններուն։

**Ի՞ՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ  
«ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆԸ,  
ՈՐ ՔԱԶԱՆԱՆ ՊԱՏՄԱԳԻ ԸՆԹԱՑՔԻՆ  
ՑԱՀԱՆ ԿԸ ԿՐԿՆԵ**

Հետեւեալ իմաստը ունի. Աախ՝ Քրիստոս իր ծնունդով երկինքի եւ երկրի միջեւ խաղաղութիւն հաստատեց, ինչպէս երեշտակները երգեցին։ Ապա՝ մկրտութենէն ետք աշխարհին արքայութեան Աւետարանը սկսաւ քարոզել եւ Աստուծոյ հետ հաշոութեան հանապարհը սկսաւ ուսուցանել։ Ի վերջոյ, մատնութեան երեկոյին, առաքեալերուն աւանդեց ըսելով. «Խաղաղութիւն կը բողում ձեզի. իմ խաղաղութիւն է, որ կու տամ ձեզի» (Յհ. 14.27), եւ քահանան Քրիստոսէն առնելով խաղաղութիւնը, ժողովուրդին կու տայ։

**ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՈՍՀԻ  
ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ԼՍԷ ՄԵՐ  
ԱՂՈԹՔՆԵՐԸ ԵԹԷ ԻՐ ԿԱՄՔԻՆ  
ՀԱՄԱՁԱՅՆ ԵՆ**

1- Իրիկունը, առտուն ու կեսօրը պիտի գանգատիմ ու հառաչեմ։ Անիկա պիտի լսէ իմ ձայնս (Սաղմուն 55:17)։

2- Զիս պիտի փնտոքը եւ գտնեք, ձեր բոլոր սիրտով պիտի խնդրեք զիս ու ես ձեզի պիտի երեխմ, կ'ըսէ Տէրը (Եր. 29:13)։

3- Արդարմերը կ'աղաղակնեն եւ Տէրը կը լսէ ու իրենց բոլոր նեղութիւններէն կը փրկէ զանոնք (Սաղմուն 34:17)։

4- Համարձակ կերպով կը դիմենք Աստուծոյ այն վստահութեամբ, որ երբ իր կամքին համաձայն բան մը խնդրենք կը լսէ մեզ (Ա. Յովհաննու 5:14)։

5- Խնդրեցէք Աստուծմէ եւ պիտի տայ ձեզի, փնտոեցէք եւ պիտի գտնեք, բախտեցէք եւ պիտի բացուի ձեզի (Սատրէու 7:7)։

6- Եթէ այդպէս է, կը նշանակէ թէ անոնք, որ Ջրիստոս Յիսուսի միացած են դատապարտութեան ենթակայ չեն, որովհետեւ մարմնաւրապէս չեն ապրիր, այլ՝ հոգեւրապէս։ Որովհետեւ Հոգիին Օրէնքը զիս Ջրիստոս Յիսուսի միացնելով կենդանացուց եւ ազատեց մեղքի եւ մահուան ենթակայութենէն։ Արդարեւ, ինչ որ Օրէնքը չի կրնար ընել մարդկային բնութեան տակ ըլլալուն պատճառվ, Աստուած իրագործեց՝ աշխարհ որկելով իր Որդին...

*Ծարումակել կարդալ (Խոռմայեցիներու 8):*

**ՀՈԳԵԽՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ**

**ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ ԱՊՐԻԼ**

Որքան կարելի է ձեզի, ամէն մարդոց հետ խաղաղութիւն ունեցէք (Յոնվ. 12.18)։

Մարդ մը, որ հարցեր կ'ունենար իր դրացին հետ, ջանաց խաղաղութեամբ լուծել զանոնք։ Յանողուելով, որ կարելի պիտի ըլլար սիրով վերջ տալ ծագած դժուարութեանց, ան դիմեց օրէնքին։ Բացատրելու համար իր տեսակէտը, ան ըսաւ. «Լուրջ ջանք ըրի գործադրելու առաքեալին պատուէրը՝ խաղաղութիւն ունենալու մարդոց հետ, բայց անօգուտ։ Շնորհակալ են Աստուծոյս անոր համար, որ ան չէ ըսած թէ խաղաղութեամբ պէտք է ապրիլ բոլոր մարդոց հետ կեանքի բոլոր պարագաներուն տակ։ Աստուած այդպէս չ'ըսեր որովհետեւ գիտէ թէ կարգ մը մարդոց հետ խաղաղութեամբ ապրիլ կարելի չէ»։

Դժբախտաբար շատեր իրենց կարելին ի գործ չեն դներ՝ խաղաղութեամբ ապրելու համար։ Տղայ մը հարցուց իր հօրը, թէ հնչակ՝ սկսին պատերազմները եւ հայրը այսպէս պատասխանեց. «Առաջին աշխարհամարտը սկսաւ երբ Գերմանիա գրաւեց Պելջիբան»։ Եիշդ այդ պահում մայրը միջամտեց եւ ըսաւ. «Յաճիս ծշմարտութիւնը յայտնէ։ Պատերազմը սկսաւ մարդու մը սպանութեան պատճառով»։ Ամուսինը բարկացաւ եւ պոռաց. «Ո՞վ կը պատասխանէ տղուն հարցումին. դո՞ւն թէ ես»։ Կինն ալ բարկացաւ եւ դուռը ուժգին զարնելով դուրս ելաւ։ Տղան ըսաւ. «Յայր, իինա գիտեմ, թէ պատերազմները հնչակ՝ սկսին»։

Արդեօք դուն բարկութեամբ կը հակադրես, թէ մշակած ես խաղաղութեամբ ապրելու սովորութիւնը։ Յիսուս աղօթեց իր թշնամիներուն համար։ Դուն ալ կ'աղօթէ։ Փորձենք խաղաղութեամբ ապրիլ բոլորին հետ։